ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2077-Ա « 20 » ապրիլի 2026թ.

ՆՈՐԱԳԱՎԻԹ 1-ԻՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ Հ.72 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Պայծառ Սաքեյանի լ/ա Շողիկ Հարությունյանի դիմումը՝ Նորագավիթ 1-ին հողատարածք հ.72 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.3453 և հ.2072 վկայագրերը և ՀՀ կադաստրի կոմիտեի հ.ԱՏ-05082025-01-0690 տեղեկանքը:

Երևանի քաղաքապետի 2022 թվականի հունիսի 14-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.2205-Ա որոշմամբ Նորագավիթ 1-ին հողատարածք հ.72 հողամասին տրամադրվել է Նորագավիթ 13-րդ փողոց հ.45/6 հասցեն:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Նորագավիթ 1-ին հողատարածք հ.72 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 300.0քմ, որքան որ ամրագրված է փաստաթղթերում:

Քննարկվող՝ 300.0 քմ մակերեսով հողամասը՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 8-րդ գոտում /ծածկագիր՝ 01-011-0312-0011/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 135-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/49170-25 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Նորագավիթ 1-ին հողատարածք հ.72 հասցեում գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները որոշվում են 300.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ